

թիւնները հասկըցեր, սիրեր ու մեծարեր է. և մինչեւ ի մահ զձեզ սիրելին, գովելին ու ձեզի արժանի որդի եւ աշակերտ ըլլալու շանքին ետ պիտի չկենայ :

« Հապա ձեզի, Մեծապատիւ եւ Ազգասէր Յովհաննէս Սղա, ձեզի Բնչ շնորհակալուրիւն ընեմ որ վրաս այնչափ սէր ու գուք ցուցցիք, այնչափ անզամ զիս տներնիդ հրամիրելով պատուեցիք : Ընդունեցէք հրապարակաւ իմ խորին շնորհակալուրիւնս, եւ ինչպէս որ իմ մտքէս ձեր քաղցր լիշատակը երբէք պիտի չելլէ, ու սիրելի Հայրս լիշած ատենս իր պատուական եղբայրն ալ սիրով ու կարօտով պիտի լիշեմ . կաղաչեմ որ դուք ալ զիս չմոռնաք ու երբեմն մտքերնիդ բերէք Առաքելը, այն Առաքելը որ ձեր երկու եղբարց Ազգերնուս փառք ու պարծանք ըլլալը քաջ գիտնալով, ոչ երբէք պիտի դադարի ձեր անզին ու ազգօգուտ կենաց երկարութեանը համար աղօրելին :

« Ո՞հ, որչափ երջանիկ կընամարի: ինքինքս, երջանիկ կըլլային նաև ծնողքս որ նոյն փափաքով այս մատադ հասակիս մէջ զիս իրենց գրկին հետացուցեր՝ երապա յուղարկեր են, երկ օր մը ձեզի պէս ազգիս օգտակար ու պատուաւոր անդամ ըլլայի :

Երախտագետ աշակերտ Զեր եւ որդի  
Առաքել Մոմենան :

Սրտասուախառն խնդութեամբ լսեց Գերապատիւ վարդապետը երախտագետ սանիցը սրտաբուղիս խօսքերը, շնորհակալ եղաւ անոնց սրտին ազնիւ զգածմանցը . խոստացաւ որ զիրենք չմոռնայ, իրենց սիրոյն ու երախտագիտութեան քաղցր լիշատակը միշտ ամեն տեղ նետն ըլլայ. եւ խնդրեց իրենցմէ որ երէ զինքը կըսիրեն՝ ազգային վարժարանիս կանոնաց պահպանութեանը նախանձաւոր ըլլան, սրտի մտօք աշխատին զիտութեամբք եւ բարի վարուք զարդարուիլ, որպէս զի սիրելի Ազգերնիս իրենցմով ուրախանայ, զարգանայ եւ բարձր ի զլուս պարծի :

Երկրորդ օրը կարելի չեղաւ այս երախտագետ աշակերտաց օրինաւոր հայցուածոց դէմ կենալ . բոլոր օրը քովեն ջատուելով շատ անզամ օրինենքն ու բարի խրատներն առնելով զոհ չեղած, ուզեցին որ խմբովին մինչեւ երկարութոյն կայարանը զինքը յուղարկեն : Հոն ալ դարձեալ սրտաշարժ տեսարան մը բացուեցաւ . ազնուամիտ սիրուն մանկունք մեծ ու փոքր երախտապարտ հոգւով սիրելի հօրերնուն չորս կողմն

առած՝ իրենց զերմահոս արտասուաց կարիլներովը աջը կոռոգէին, օրինութիւնը կըխնդրէին, կաղաչէին որ զիրենք չմոռնայ, սիրալիր զրերովը զիրենք միփրարէ. եւ այնպիսի որդեսէր հօր մը զրկին բաժնուիլը իրենց անկարելի կերեւար : Բայց հարկ էր որ Ազգին օգտին համար իրենք ալ այն դեռաբողբոջ հասակէն սովորէին անձնական գոնիք ընել...

Զանգակը զարնուեցաւ ուղեւորաց իմացընեկու համար թէ կառք մտներու ժամանակը հասեր է, պէտք է զատուիլ, բաժնուիլ, նեռանալ մարմնով, վասն զի սրտով և հոգւով անձնար է որ բաժնուինք հեռանանք գոչէին միաբերան : Վերջի համբոյրն ալ տուին, մտա Գերապատիւ վարդապետը կայարանը եւ հետը տարաւ բոլոր իր շնորհապարտ որդւոցն ու մտերիմ բարեկամացը սիրաը, որ բազմութեամբ հոն եկեր եին, որպէս զի մինչեւ յետին վայրկեանը իր սակաւագիւտ անձնանուէր բարեկամութեան քաղցր միփրաբութենէն չզրկուին :

Տրում ախուր դարձան վարժարանը պատանիք. եւ իրենց տիսրութիւնը սփոփելու համար հանգստեան ժամանակնին սիրելի հօրերնուն նամակ գրելու նուիրեցին : Այն սիրադրօշմ ու կարօտալիր բազմարիւ նամակաց մէջէն զոնէ մէկքանին կուզէինք ամսագրոյս մէջ հրատարակել, բայց վարդապետին զգածմանցը հակառակ ճանչնալով իր վրայ երկայն գովեստներ զրելը, մանաւանդ այնպիսի գրուածքի մը մէջ որոյ Խմբագրապետն ու Ռին ինքն ինքն է, ակամայ կամօք զանց կընենք :



#### ՏԱՐԻ

Հասարակ տարուան մէջ (565 օր) 52 եօրնեակ կամ շաբար կայ, եւ 1 օր աւելի. ու տարին որ օրով որ սկսի՝ նոյն օրով ալ կը վերջանայ. օրինակի համար, մեր տարւոյն առաջին օրը, այսինքն մեր կաղանդն եր երեքշարքի. տարւոյն վերջի օրն ալ երեքշարքի է. Եւրոպացւոց կաղանդն եր հինգշարքի, տարւոյն վերջի օրն ալ հինգշարքի է:



*Propriétaire-gérant : A. LACHAT.*

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ԱՐԱՄԵԱՆ.

PARIS.— IMPRIMERIE WALDER, RUE BONAPARTE, 44.